

# Ներկայացնել Հիսուսին

**Միքայելա Վիլքինս**
(Հիմնված է իրական պատմության վրա)

Դավիթը նստել էր աղոթատան առաջին շարքում և անհանգիստ շարժում էր ոտքը: Նա հուզված էր: Նա նոր էր ավարտել Երեխաների միությունը և դարձել էր սարկավագ: Ավագ խմբի տղաները պատրաստվում էին ցույց տալ Դավիթին և մյուս 11-ամյա տղաներին, թե ինչպես բաժանել հաղորդությունը:



Դավիթի աուտիզմը երբեմն դժվարացնում էր, որ նա նոր բաներ սովորեր: Երեխաների միությունը ավարտելը դժվար էր եղել նրա համար: Եվ այժմ հաղորդությունը բաժանելը վախի զգացում էր առաջացրել: Գուցե նա ինչ-որ բան սխալ աներ, և բոլորը ծիծաղեի՞ն իր վրա:

Հակոբը՝ ավագ խմբի տղաներից մեկը, նստած էր Դավիթի կողքին: «Մենք ուրախ ենք, որ դու մեզ հետ ես»,- ասաց Հակոբը: Նա ձեռքը խփեց Դավիթի ձեռքին: «Քեզ մոտ ամեն բան հրաշալի կստացվի»:

Դավիթը ժպտաց: Դա օգնեց նրան մի քիչ ավելի լավ զգալ:

Մյուս երիտասարդ տղամարդիկ ցույց տվեցին 11 տարեկաններին, թե ինչ անել: Նրանք ցույց տվեցին նրանց, թե ուր գնալ և որ շարքերում բաժանել: Նրանք փորձում էին՝ քայլելով աղոթատան միջանցքներում: Նրանք ցույց էին տալիս տղաներին, թե ինչպես բռնել հաղորդության սկուտեղները:

«Նայի՛ր, մայրիկ», - ասաց Դավիթը, երբ տուն հասավ: Նա ձեռքը բարձր էր պահել: «Ահա թե ինչպես եմ ես պահում սկուտեղը: Զգույշ, այ այսպես: Քանի որ ես ներկայացնում եմ Հիսուսին, և ես ուզում եմ ցույց տալ իմ հարգանքը»:

Երիտասարդ տղամարդիկ փորձում էին Դավիթի և մյուս տղաների հետ՝ կիրակի օրերը եկեղեցուց հետո և շաբաթվա ընթացքում տեղի ունեցող միջոցառումների ժամանակ: Նրանք քայլում էին նախատեսված շարքերով: Դավիթը փորձում էր պահել սկուտեղը:

Շուտով եկավ օրը, երբ նա պետք է առաջին անգամ բաժաներ հաղորդությունը:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ԴՈՆԱԼԴ ՎՈՒԻ

«Ի՞նչ զգացողություններ ունես»,- հարցրեց հայրիկը:

«Ես շարունակում եմ անհանգստանալ»,- ասաց Դավիթը:

«Եկ խոսենք այն մասին, թե դու ինչ ես արել նախապատրաստվելու համար»,- ասաց հայրիկը:

«Մենք ընտանիքով սուրբ գրություններ ենք կարդացել քահանայության վերաբերյալ»,- ասաց Դավիթը: «Քահանայություն կրելը նշանակում է, որ ես ներկայացնում եմ Հիսուսին: Ես կտրել եմ եղունգներս, որպեսզի ձեռքերս լավ տեսք ունենան: Եվ ես շատ եմ փորձել»:

«Կարծում եմ, որ դու լավ նախապատրաստվել ես»,- ասաց հայրիկը:

Երբ Դավիթը եկեղեցի հասավ, նստեց առաջին շարքում՝ մյուս սարկավագների հետ: Հակոբը նստեց նրա կողքին: Դավիթը մտածում էր, թե ինչպես էր ներկայացնելու Հիսուսին, երբ բաժաներ հաղորդությունը: Ի՞նչ տեղի կունենար, եթե նա ինչ-որ բան շփոթեր: Նա նայեց Հակոբին, և Հակոբը ժպտաց նրան: Դավիթը նույնպես ժպտաց ու խորը շունչ քաշեց:

Երբ եկավ հաղորդությունը բաժանելու պահը, Հակոբը օգնեց Դավիթին փոխանցել սկուտեղը առաջին մի քանի շարքերում: Դավիթն ուրախ էր, որ կողքին մեկը կար:

Դավիթը նայում էր մարդկանց, մինչ բաժանում էր հաղորդությունը: Նրանցից շատերը նստած էին՝ գլուխներն ակնածանքով խոնարհած: Ոմանք խոհուն տեսք ունեին: Դավիթը խաղաղություն զգաց: Նա ներկայացնում էր Հիսուսին: Նա երախտապարտ էր, որ կարող էր օգնել ուրիշներին մտածել Հիսուս Քրիստոսի մասին: ●

*Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:*

